

Դ

Ա. ԺԱԲՈՐՎ

ԽՆԴՐԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱՇ ԻՆՔՆԱՇԻԱԾ  
ՅԵՎ ԻՆՉԴԵՍ Ե ՆԱ Բ Ո ՀՈՒՄ



629.1  
4-12

ՊԵՏՏԱՍ ՌԱԶՄԱՐԱՏՎԱԴԻՆ ՅԵՐԵՎԱՆ

25.04.2013

14.207

629.1  
Մ  
4-12

04 AUG 2010

Ա. ՃԱՐՈՎ

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԹԻՌԸ  
ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ՆԱ ԹՌՉՈՒՄ

Թարգմ. Մ. ՄՈՒՐՈԴՅԱՆ  
Խմբ. Պ. ԱԹԱՅԱՆ

814  
57



## Ի՞՞ն Ե ԻՆՔՆԱՄԹԻՌԸ

Ամէն վոք գիտե, վոր ինքնաթիոր թռչելու մերենա յե, թևեր ու մոտոր ունի, կարող ե թռչունից արագ թռչել և ողով փոխադրել հաղարավոր կիլորոններ:

Բայց ինչպե՞ս ե կառուցված ինքնաթիոր: Ի՞նչու ծանր, յերեմն մի քանի տուննի հասնող մեքենան կարող ե ողով թռչունի պես ոլանալ: Սրա մասին հազիվ թե ամեն վոք իմանա: Թռչունները թռչում են չնորհիվ իրենց թևերի: Յեթե թևերը կոտորենք, ապա թռչունը կամ ճանճը քարի նման վայր կընկնի գետին: Ուրեմն, թռչունները և միջատներն ոդից ծանր են և կարող են ողով թռչել միայն չնորհիվ իրենց մկանների ուժի, վորոնք արագ շարժման մեջ են դնում նրանց թևերը:

Ինքնաթիոր նույնպես ոդից ծանր ե, և ուստի նաև շատ բանով նման ե թռչունին: Ճիշտ ե, նա չի թափահարում թևերը, գրանք անշարժ են, բայց, զրա փոխարեն ինքնաթիոն ունի ամուր մկաններ, որտեղ մոտարին ե, վորը շարժման մեջ ե դնում ոդային պտուտակը կամ, ինչպես զրան անվանում են, պրոպելլերը:

Իսկ ինչո՞ւ ինքնաթիոր թռչունի նման չեն չինել, վոր մենքնան ել կարողանա, թռչունի նման, թափահարել թևերը:

Փորձել են չինել այդպիսի ապարատներ, բայց

Պետհրատի տպարան. Սրբադրեց և. Տերուան

Պատվ. № 3495 Գլամետ. № 8001. Հըատ. 2433 Տէրած 3000

Հանձնված ե արտադրության. 16 նոյեմբերի 1932 թ.

Ստորագրված ե տպագրիլու 8 դեկտեմբերի 1932 թ.

գրանք անհաջողության են մատնիվել։ Յել վերջապես դրանք հարկավոր ել չեն։ Չու վոր անշարժ թևերով ինքնաթիռի վրա մարդն արդեն վաղուց ե թուշունից շատ արագ թռչում։ Պետք ե միայն մեր ողային մեքենան դեռ կատարելագործել և յուրաքանչյուրի համար մատչելի դարձնել։

Այժմ տեսնենք, թե ինչու ինքնաթիռը կարող ե թռչել, ինչպե՞ս և նա կառուցված, ինչպիսի ինքնաթիռներ են լինում և ինչպես և կատարվում նրանցով թռիչքը։


## ՄԱՆԿԱԿԱՆ ԹՂԹԻ ՈՉԸ ՊԼԱՆՑՈՐ ՅԵՎ ԻՆՔՆԱԹԻՌ

Ողային թղթի ոճը կարելի յե բաց թողնել միայն քամու ժամանակ։

Կարելի յե ստիպել, վոր թղթի ոճը, բարձրանակ քամու բացակայության դեպքում, բայց վոչ յերկար ժամանակ։ Այդ այսպես և արվում։ Թղթի ոճը դնում են գետնին, և տղան, բաց թողնելով թելը մոտ 30 մետր յերկարությամբ, սկսում ե արագ վազել։ Թղթի ոճը բարձրանում ե և պահպում ե ողում այնքան, վորքան տղան վազում ե, բայց հենց վոր նա կանդ ե առնում, թղթի ոճը գլորտ վելով վայր ե ընկնում։ Բայց այստեղ բանն ինչումն ե։

Եերբ տղան սկսում ե վազել ու իրեն հետեւց քաշում ե թղթի ոճը, ապա հանդիպական ողը խրվում ե նրա ստորին մակերեւութին (նկ.1)։ Սա տեղի յե ունենում այն պատճառով, վոր շնորհիվ հատուկ յեղանակով ամրացրած թելի ու պոչի (վոր պատրաստվում ե սովորաբար խսիրից), թղթի ոճի առջեկի յեղը մի փոքր թեքված ե դեպի

առաջ։ Հանդիպական ող՝ (վոր մեր նկարի վրա ցույց ե տրված ոլաքներով) իրեն ճանապարհին հանդիպում ե թղթի ոճի թեքված մակերեւութին ու ճնշում ե նրան ցածից վեր։ Սրանից ել թղթի



Նկ. 1. Մանկական թղթի ոճ բաց թողնելը։ Պլաններով ցույց ե տրված հանդիպական ողի գործողություններ։

ոճը բարձրանում է։ Յեթե հանդիպական քամի կա, ապա թղթի ոճը կթռչի, նույնիսկ յեթե տղան կանուառնի։

Այժմ ողարդ ե, վոր յեթե թղթի ոճը բաց է թողնվում քամի յեղած ժամանակ, ապա հենց վոր տղան վազելը զադարեցնի, հանդիպական ող (քամի) ել չլինի, թղթի ոճը վայր կընկնի։ Այս որինակից յերեսում ե, վոր թղթի ոճի թռիչքի համար հարկավոր ե, վոր կամ հանդիպական բամի փչի, կամ թե քամի չլինելու դեպքում, քորի ոճն ինքն արագ շարժվի (նբան իր հետեւց քաշում ե վազող տղան)։

Ուրեմն սա միւնույն բանն է: Ահա այդ շատ  
կարեռ և մեղ համար:

Ինքնաթիռի թևերի առջեկի յեղբերը նույնպես  
մի փոքր բարձրացրած են, միայն շատ քիչ, աչքով  
համարյա աննկատելի չափով: Ինքնաթիռը պետք  
է թռչի միշտ և ամենուրեք, ուրեմն նրան պարա-  
նով չես թռցնի թղթի ոձի նման: Ճիշտ ե, այժմ  
շատ լավ են թռչում պլանյորներով (պլանյորը տ-  
ռանց մուտքի ինքնաթիռ ե), վորոնց մասին հա-  
պանորեն նույնպես բոլորդ լսել եք: Այսպես ահա  
պլանյորը բաց են թռղնում ճիշտ թղթի ոձի նման,  
պլանյորը դրվում է լեռան վրա քամու դիմաց, իսկ  
պլանյորի քթի կեռին, գցած յերկար պարանից



Նկ. 2. Պլանյոր բաց թռղնելը: Նկարի վրա պարզ յերեսում ե բաց  
թռղնելու պարանը, վորը գեռ կեռից դուրս չի ընկեր.

Ժդում ե 6 մարդուց բաղկացած մի խումբ դեպի  
քամու հակառակ կողմը: Պլանյորը բարձրանում ե,  
պարանի ողակը կեռից դուրս ե ընկնում, և ապա  
պլանյորը թռչում է միայնակ (նկ. 2):

Վորպեսզի ինքիաթիռը բաց թռղնենք և նրան  
սովորենք, վոր ավելի հեռու թռչի, ապա հետեւ-

պես պետք է ստիպենք նրան արագ շարժվել, այն  
ժամանակ հանդիպական ողը կճնչի թեվերին ցա-  
ծից վեր ու ինքնաթիռը կբարձրանա:

Իսկ այդ ինչպես անել:

ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Ե ԻՆՔՆԱԹԻՌԻ ՈԴԱՅԻՆ ՊՏՈՒ-  
ՏԱԿԸ (ՊՐՈՊԵԼԼԵՐԸ)

Հայտնի յե, վոր հողմաղացը միայն այն ժա-  
մանակ կաշխատի, յերբ նրա թևերն ուղղված լի-  
նեն քամու դիմաց: Իսկ ինչո՞ւ յե այսպես: Բանը  
նրանումն ե, վոր հողմաղացի թևերը (թաթերը)  
կորացած են պտուտակի ձեռվ, և յերբ նրանց վրա  
ճնշում ե ողը (քամին), ապա նրանք, հաղցրած  
լինելով հողմաղացի շարժական լիսեռի վրա,  
սկսում են պտտվել:

Գյուղում համարյա յուրաքանչյուր դարպասի  
վրա կարելի յե տեսնել դեպի վեր ցցված փայտի մի  
ձող, վորի վերին ծայրին հաղցրած ե յերկու թա-  
թավոր հողմացույց: Յերբ քամին փչում ե նրա  
զեմ, ապա նա սկսում ե պտտվել այնքան արագ,  
վոր թաթերը չեն նկատվում, նրանք միանում ե  
ժիապաղաղ շրջան են կազմում: Այս հողմացույցի  
թաթերը նույնպես կորացրած են պտուտակի ձեռվ:

Հողմաղացի թևը, ինչպես և դարպասների  
վրայի հողմացույցը, ողային պտույտներ են:  
Ծնորհիվ թաթերի հատուկ կառուցվածքի, ողային  
պտուտակն սկսում ե արագ պտտվել, յեթե նրա  
զեմ փչում ե քամին (ճնշում ե ողը): Իսկ ի՞նչ  
տեղի կունենա, յեթե մենք ինքներս վորեն կերպ  
սկսենք արագ պտտել այս ողային պտուտակը:

Որինակի համար վերցնենք «Ճանճ» կոչված

սովորական խաղալիքը: Դա բաղկացած է նույն չողմացույցից (վորը պտուլում և դարսասների վրա), բայց հազարած է մի վորքը բարակ ու կլոր ձողին (նկ. 3): Յեթե այս ձողիկը դնենք ափերի մինչև և, ուժեղ պտտելով բաց թողնենք, ապա մինչ և, ուժեղ պտտելով բաց թողնենք, ապա ձանձը բզզալով կթռչի դեսի վեր: Ուրեմն, ողային:




Նկ. 3 «Ճանձ»—ամենապարզ ողային պտուտափկը: Նկարի վրա ձևը փոքրացրած է: Վորպեսզի «Ճանձ» թոշի, պետք է, վոր ձողիկը թաթերի ընդհանուր յերկարությունը փոքր չենի:

պտուտափկը, արագ պտտման դեպքում, պտուտափկում և ողում ինչպես յերկաթե պտուտափկը վայտի մեջ:

Յերկակայեք այժմ ճիշտ այսպիսի մի հողմացույց, բայց միայն մեծ չափի, թեկուղ և յերկու-յերեք մետր ավելի մեծ յերկարությամբ: Յեթե այդպիսի մեծ ողային պտուտափկը պտտեցնենք մեծ արագությամբ, ապա դա հսկայական ուժով կձգտի պտուտափկի ողի մեջ: Զի՞ կարելի արդյոք այդ հարմարեցնել ինքնաթիռի համար: Պարզվում է, վոր շատ լավ կարելի յե հարմարեցնել:

Ինքնաթիռի վրա (նկ. 4), սովորաբար նրա առջևի մասում. տեղալորվում է բենզինի հզոր մոտոր, իսկ նրա իսկով վրա հաղցվում է ողային պտուտափկը, կոմ ինչպես դրան անվանում են, պլրպելլերը (Փրանսիան բառ է): Մոտորը հսկա-

յական արագությամբ պտտում է ողային պտուտափկը, վորը ճգտելով պտուտափկել ողի մեջ, իրեն հետեւից քաշում է ամբողջ մեքենան: Վորովհետեւ ինքնաթիռը կանգնած և անխիլների վրա, ապա նա պկում է ավելի ու ավելի արագ շարժվել՝ դետնի




Նկ. 4. Փակասակ. Կեց ինքնաթիռը: Ուշային պտուտափկ պարզ յերեսմ ա:

վրայով: Սրանից նրա թեկությունին մտսի վրա հանդիպական ողի ճնշումն ավելի աճում ու աճում է, կամ, ինչպես ասում են, աճում է թեկությունը կիրամբարձ ուժը: Վերջապես նա անքան և մեծանում, վոր ինքնաթիռը կտրվում է դետնից, բարձրանում և ողի մեջ և թռչում է:

## ԻՆՔՆԱԹԻՒԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Այժմ հասկանալի յեւ, թե ինչու ինքնաթիռը, յերեմն մի քանի հարյուր փութ ծանրություն ունենալով հանդերձ, կարող է ողի մեջ թռչել թռչունի նման: Բայց ի՞նչպես ե կառուցված այս հրաշտլի մեքենան: Ինչպես են նրան զեկավարում ողի մեջ:

Ինքնաթիռի գլխավոր մասը՝նրա մարմինն ե, կամ, ինչպես նրան հաճախ անվանում են, ֆյուզելյաժը (նկ. 5 և 6): Ֆյուզելյաժի առջևի ծայրի տակը գտնվում է շաստին, -սա մի սայլակ ե, վորի




Նկ. 5: Յամաքային ինքնաթիռի կառուցվածքը: 1. Ֆյուզելյաժ: 2. Աղաչույի նստելու տեղը: 3. Մոտոր. 4. Ողային պատռակ: 5. Կառուտ. 6. Շքարան. 7. Շաստի. 8. Կեկ. 9. Աւղության դեկ. 10. Ստաբիլիզատոր. 11. Մորության դեկ. 12. Ելերուներ. 13. Ստարին թիւը. 14. Վերին թիւը. 15. Մութակներ. 16. Տրոսներ. 17. Հետակ:

վրա կանգնած ե ամբողջ մեքենան: Ֆյուզելյաժի հետեւի ծայրը, կամ պոչը, հենվում է զետանին րեսուով (կաստի): Մարմնի առջևի մասում գտնվում է մոտորը նրա լիսեռին հաղցրած պրոպելլերով: Ֆյուզելյաժի ծայրի վերին մասը, վոր ծանկում է մոտորը, կոչվում է կառուտ: Մոտորի յե-

տեռում սովորաբար գտնվում են բենզինով ու յուղով լի պահամանները:

Ողաչույի և ուղեռի (կամ ուղեռների) նստելու տեղերը գտնվում ֆյուզելյաժի ներսում: Ողաչույի առաջեւ գտնվում են ինքնաթիռն ու մոտորը զեկավարելու չծակները, նույնպես և բոլոր անհրաժեշտ անոթները: Ողաչույն և ուղեռը քամուց պաշտպանվում են ապակի շքարաններով:

Ֆյուզելյաժի յետեւի ծայրում գտնվում են դեկերը ինքնաթիռը զեկավարելու և ողում կայունություն պահպանելու համար որդանները: Սրանք կազմում են պոչի փետրավորումը կամ ուղղակի պոչը: Գոյություն ունեն յերկու զեկ՝ ուղղության զեկ և խորության զեկ. առաջինը ծառայում ե ինքնաթիռն աջ ու ձախ դարձնելու համար (ինչպես



Նկ. 6. Ինքնաթիռն առանց հանդերձանքի:

սալակի զեկը), իսկ յերկբորդը՝ վայրեջքի և վերելքի համար: Կայունությունը պահպանելու համար ծառայում են յերկու որդաններ՝ ուղղաձիգ ստարիլիզատորը, կամ այլ կերպ-կիլ, և հորիզոնական ստաբիլիզատորը: Ինքնաթիռի կիլը ծառայում է ճիշտ նույն նստառակի համար, ինչի համար ե ծառայում սովորական նավակի կիլը, վորպեսզի

ինքնաթիռը կարողանա հեշտությամբ թռչել ուղիղ զծով. Հորիզոնական ստարիլիքատորը ծառայում է նրա համար, վոր ինքնաթիռը չտարուրեցի մերթդեպի վար, մերթ գեպի վեր, այլ ուղիղ թռչի այն անկյան տակ, ինչ անկյան տակ ուղղում է նրան ողաջուն:

Ֆյուզելյաժին ամրացրած են թևերը, կամ ինչպես այժմ հաճախ անում են, մի ամրող հաստ թև յերկու կողմերի համար: Յեթե թևերը բաղկացած են յերկու հարկից, ապա նրանք հաճախ իրար հետ ամրացրած են լինում մութակներով և պողպահով արուներով կամ ժապավեններով: Յեթե թևերը մի հարկանի յեն, ապա նրանք ամրացվում են դիմակալներով, վորոնք դնում են թևերի ստորին կողմից գեպի ֆյուզելյաժը:

Թևերի ծայրերի վրա յետեվի կողմից գտնվում են շարժական փոքրիկ թևերը, վորոնք ծառայում են խոտորնակի կայունությունը պահպանելու համար (փորձեսդի ինքնաթիռը չթեքի դեպի մի կողմը), սրանք կոչվում են ելերսներ:


Սրանք են ինքնաթիռի գլխավոր մասերը: Այժմ ուսումնասիրենք դրանց մոտիկից: Ինչպես ե կառուցված ինքնաթիռի ֆյուզելյաժը (իրանը):

## ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ՍԱԼԱՌՆԱԿԻ ՖՅՈՒԶԵԼՅԱԺԸ (ՄԱՐՄԻՆԸ)

Ֆյուզելյաժը—դա, այսպես կոչված ինքնաթիռի մարմինն է, նրան հիմքը: Ֆյուզելյաժը չատ ամուր և շինվում: Եկար 7-ր պատկերացնում է նրա կտուցվածքը: Մենք տեսնում ենք, վոր նա բաղկացած է հատ յերկար չորսուներից, զրանք կոչ-

վում են լոնժերոններ: Լոնժերոններն իրար հետ ամրացած են մութակներով և խաչաձև պիրիկ ձգված պողպատե ձգիչներով: Լոնժերոններն ու մութակները շինվում են կամ փայտից, կամ թե պողպատե խողովակներից:

Ֆյուզելյաժի առջևի մասում գտնվում է մի շրջանակ մոտորի համար, վորի վրա ամրացվում է մոտորը: Մոտորի շրջանակը միշտ չինվում է պողպատե խողովակներից և շատ ամուր պետք է լինի,



Նկ. 7. Ինքնաթիռի ֆյուզելյաժը (մարմնի) կառուցվածքը:

վորովհետեւ մոտորի տատանումներից (այսինքն ցնցումներից) Փյուզելյաժը կարող է հեշտությամբ տեղից շարժվել:

Ֆյուզելյաժի կմախքը վերևից ծածկվում է կամ կտավով, կամ ֆաներով: Կտավը տողորվում է հատուկ բաղադրությամբ և ծածկվում է ներկով ու լաքով, այնպես վոր անթափանց ու կոկ ե դտունում: Ֆաները ծածկվում ե ներկով և լաքով: Մե-

տաղյա ինքնաթիոների Փյուղելյաժը ծածկվում է դյուրալումին մետաղի բարակ թերթերով:

Ֆյուղելյաժը շինվում է կամ քառանկյունաձև կամ յեռանկյունաձև, կամ կլոր և այլն: Բայց դրա ձեւը միշտ այնպես է լինում, վոր նրա ծայրերը սրված են լինում և յետեի ծայրը միշտ ավելի շատ և սրված լինում, քան առջևինը: Այս ձեւը ինչպես արդեն ապացուցված է, ամենաձեռնտուն է, և այս զեպքում հանդիպական ողն ամենից քիչ է խանդարում ինքնաթիոի առաջ շարժվելուն, կամ, ինչպես առում են, փոքր դիմադրություն է ցույց տալիս:

Շասսին (նկ. 4) հարկավար է նրա համար, վոր ինքնաթիոը կարողանա հոլովվելով (գլորվելով) շարժվի գետնի վրայով վեր բարձրանալու և իջնելու ժամանակ: Շասսին պատրաստվում է ամուր պողովատե խողովակներից և ամրացվում է Փյուղելյաժի առջևի մասի տակին: Մետաղյա դողերով ու ճաղերով անիվներն ունեն ռետինե ծածկոցներ, նրանց ներսում գտնվում են ռետինե կամերաներ, վորոնք լցվում են ողով: Այս արվում է վազքի ժամանակ, ցնցումները կասեցնելու համար: Բայց սա բավական չի: Հրումներն ել ավելի թեթելվացնելու համար այն սոնին, վորի ծայրերին հաղցված են անիվները, ամուր չեն ամրացնում շասսիին, այլ կապում են հաստ ռետինե մի քանի անդամ հյուսած քղով: Հրումների ժամանակ քուղը ձգվում ու թուլացնում է հրումները: Ռետինե քուղը կոչվում է ամորտիգատոր: Հենակը (նկ. 5 և 13), վորը

վերելքի ժամանակ հենակը չի խանդարում, վորովհետև պոչը բարձրանում է, իսկ իջնելու ժամանակ բեկոն արգելակում է ու պակասեցնում է վազքը:

## ԹԵՎԵՐ

Թեկերից հատկապիս ուժեղ կախում ունի, թե ինքնաթիոն ինչպես է թռչում, լավ կամ վատ: Թեկերը պետք լինեն դիմացկուն և թեթև: Ահա թե ինչու յե գժվար նրանց կառուցելը:

Փայտե ինքնաթիոների թեկերի կմախքը սովորաբար բաղկացած է յերկու յերկայնակի չորսուներից, վորոնք նույնպես լոնժերոններ են կոչվում (ինչպիս Փյուղելյաժինը): Այս լոնժերոնները շինիվում են յերկու բավականին բարակ փայտե ձողերից, վոր միացված են իրար հետ Փաներից պատրաստած յերկու պատերով: Ստացվում է կարծես թե յերկար և նեղ արկղ կամ տուփ: ուստի այսպիսի լոնժերոնները և կոչվում են տուփածու:

Լոնժերոնների վրա հազցվում են բազմաթիվ կողեր, վորոնք կոչվում են ներվյուրներ: Ներվյուրներն իրենից ներկայացնում են փայտե ցանցակերպ կողեր, վոր շինված են բարակ փայտե ձողերից ու ֆաներներից: Ներվյուրների ձեւը տարբեր ե լինում, և նայած այդ ձեխն, ստացվում է թեկի այս կամ այն տրամատը (պրոֆիլը), այսինքն թուլացնում է հետինե քուղը կոչվում նրա խոտորնակի կտրվածքի կամ կողքի տեսքը:

Ներվյուրների առջևի և յետեի ծայրերն ամուսնում է Փյուղելյաժի յետեի ծայրի տակին, սուրացվում են փայտե ձողերով: Թեկին դիմացկություններն հաղորդելու համար լոնժերոններն ամրացնենակի վրա խոտորնակի փայտե ձողերով ու ձգվում են

պողպատի ձգիչներով։ Թեկի կմախքը վերևից ամուր ծածկվում է բարակ քաթանով, վորը տողավում է (խմմվում ե) հատուկ բաղադրությամբ, և այնուամենայնիվ ծածկվում է ներկով և լաքով։ Սրանից թեր կոչտ, փայլուն ու անթափանց ե դառնում։ Յերբեմն քաթանի փոխարեն դործ ե ածվում բարակ Փաներ, վորը նույնպես ծածկվում է ներկով ու լաքով։

Մետաղյա ինքնաթիւների թեկի կմախքը շինվում է մետաղից ու հաճախ ծածկվում է դյուրացում (նիշի\*) բարակ ծայավոր թերթերով, հաղվագյուտ դեսլքերում-բարակ պողպատով։

Այժմ ավելի ու ավելի հաճախ թերթը շինվում էն հաստ արամատով։ Վորոշ ինքնաթիւների թեկի



Նկ. 8. Մետաղյա թեկի գիմացկունության ստուգումը


հաստությունը 1 մետրից ավելի յէ։ Այսպիսի հաստության դեպքում ավելի հեշտ է շինել շատ ամուր (նը. 8)։ Իսկ յեթե թեր ամուր է ստացվում, առան կարելի յէ ամրացնել Փյուղելյաժին առանց վորեւ մութակների և դիմկալների-այսպիսի թեր

ինչ բան է դյուրացումինը-բացատրված և ստորև

կոչվում է աղատաբար։ Աղատաբար թեր ավելի ձեռնոտու յէ, վորովհետեւ տրոսները, մութակներն ու դիմկալները ստեղծում են ողի ավելորդ դիմադրություն, այսինքն փոքրացնում են ինքնաթիւնի արագությունն ու նրա վերամբարձ ուժը։

### ՄՈՏՈՐ ՅԵՎ ՈԴԱՅԻՆ ՊՏՈՒՏԱԿ


Մոտորը-ինքնաթիւնի սիրտն է (նկ. 9)։ Նրա աշխատանքի հուսալիությունից հաճախ կախված է



Նկ. 9. Մոտորի և ոգալին պտուտակի տեղափորությունը ինքնա-

թիւ միայն թոփչքի կատարումը այլ և նրա անվետանդությունը։

Ինքնաթիւրի մոտորն իրեն կառուցվածքով համարյա վոչնչով չէ տարբերվում ավտոմոբիլային մոտորից, բայց ավելում ոտորը սովորաբար ավելի



Նկ. 10. Ավելում ոտորի սխեման: Պարզության համար ցույց են տրված միայն դիմավոր մասերը և մի գլանի կտրվածքը: 1. Կարտիր. 2. Գլան. 3. Ներթողի խողովակը. 4. Դյուրավլա խառնուրդի ճանապարհը. 5. Ներթողի կափույրը. 6. Արտաթողի խողովակը. 7. Արտաթողի կափույրը. 8. Գլանը սառեցնելու համար ջուրը. 9. Ջրային ջապիկ. 10. Մխոցը. 11. Շատուն. 12. Ծնկավոր լիսեռ. 13. Լիսեռի ծունկը. 14. Պրոպելենը. 15. Սադնիտո. 16. Սադնիտոյի խարիսխը. 17. Սադնիտոյից դեպի մոմերը ձբդվող հեկտարական լարերը. 18. Մոմ:

հզոր և լինում: Մոտորի ընդհանուր կառուցվածքը յերեսում և 10-րդ նկարի վրա:

Մոտորի դիմավոր մասը—գլանն ե. գլանները սովորաբար մի քանի հատ են լինում: Գլանը պատրաստվում ե պողպատից. նրա ներսում շարժվում է մխոցը, վորն իրեն շարժանակով (շատունով), միա-

յած ե մոտորի ծնկավոր լիսեռի հետ: Նշանակում է, լիսեռը պտտելու համար պետք է շարժել շարժանակն (շատունն) ու մխոցը: Բայց ինչպես է այդ արվում:

Գլանի վերևի ծայրում կա յերկու կափույր՝ ներթողի ու արտաթողի: Հենց այստեղ ել կա հատուկ հարմարանք գլանի մեջ մտնող բենզինը (նրա գոլորշիները) վառելու համար. այս հարմարանքը կոչվում է վառելու մոմ:

Յենթադրենք թե, գլանի մեջ ներթողի կափույրի միջով մտնում է բենզինի և ողի խառնուրդ (դյուրավլա խառնուրդ): Յեթե այժմ ստիպենք մխոցին շարժվել, ապա նա կսեղմի դյուրավլա խառնուրդը: Յեթե խառնուրդը բավական սեղմած ե լինում, զլանի ներսում մոմի վրա առաջանում է ելեկտրական կայծ: Կայծից դյուրավլա խառնուրդը բոցավառվում է և գոյանում են շիկացած շատ գաղեր, վորոնք այնքան ուժեղ են նշում մխոցի վրա, վոր նա սկսում է շարժվել. մխոցն իրեն շատունով (շարժանակով) հրում է ծնկավոր լիսեռին, վորը սրանից պտուտական շարժման մեջ է գրվում: Բանեցրած գաղերը դուրս են թողնվում գլանից արտաթողի կափույրի միջով, իսկ ներթողի կափույրի միջով ներս է մըտնում դյուրավլա խառնուրդի նոր բաժինը: Նա նորից բոցավառվում է, մխոցը նորից է հրում շատունին և այլն: Այսպիսով և տեղի յե ունենում մոտորի աշխատանքը:

«Բայց ինչպես ե սկսում մոտորն աշխատել»— կհարցնի ընթերցողը:

Մոտորը բանեցնելու համար պետք է միշտանի անդամ պտտել մոտորի լիսեռը, պտտելով պրո-

պելլերը։ Դրանից միոցները մտնում են գլանների մեջ, գլանները կմանի դյուրավառ խառնուրդը (բենզինն ու ողը), ելեկտրական մեքենան (մագնիսոն), վորն առամսավոր անիվով միացված ե մոտորի լիսեռի հետ, կոկսի աշխատել ու գլաններից մեկի մոմի վրա կառաջանա ելեկտրական կայծ։ Կայծը կվառի խառնուրդը և հետո արգեն մոտորն ինքն կոկսի շարունակել աշխատանքը։ Հետագայում բոլորը կատարվում ե ավտոմատորներն։

Գլանները ստորին (բաց) ծայրերով ամրացված են հատուկ մեծ մետաղե տուփի մեջ, վորը կոչվում է կարտեր։ Հենց սրա մեջ ել պտտվում ե ձնկավոր լիսեռը։ Գլաններն աշխատանքի ժամանակ այնքան ուժեղ են տաքանում, վոր նրանց անպայման հարկավոր ե սառեցնել։ Այդ արվում ե հանդիպական ողի ողնությամբ— այն ժամանակ գլանների արտաքին մակերեսույթը շինվում ե կողավոր, վորից նա ավելի չուտ ե սառչում։ Ավելի հաճախ ել սառեցնելու համար գործադրվում ե ջուրը, վորը հատուկ պահամանից (ուղիսատորից) մտնում ե այսպես կոչված շապիկների՝ հատուկ մետաղե պատյանի մեջ՝ վորոնցով պատած են գլանները։

Մոտորի յուղումը կատարվում ե ավտոմատորնեն յուղի պոմպի (նասոսի) ողնությամբ, վորը շարժման մեջ ե դրվում մոտորի լիսեռից։

Դյուրավառ խառնուրդ պատրաստելու համար կառուցված ե հատուկ անոթ, վորը կոչվում ե կարրյուրատոր։ Բենզինը պահամանից մտնում ե այդ անոթի մեջ և այսուղ ավտոմատորնեն պահանջված հարաբերությամբ խառնվում ե ողի հետ

և արդեն գաղակերպ վիճակում անցնում ե գլանների աշխատանքային կամերան։

Կարտերից դուրս ցցված ծնկավոր լիսեռի առջեկի ծայրին հագցվում ե իրեն ականոցով ռդային պտուտակը կամ պրոպելլերը։

Ողային պտուտակը պատրաստվում ե վայտից, իսկ վերջին ժամանակներս—մետաղից (նկ. 11)։ Ապագան իհարկե մետաղե պտուտաւի ինն ե։

Ժամանակակից ինքնաթիռների մոտորի լիսեռը (հետեաբար և պտուտակը) մի ըստելում ունում ե մոտ 1500 պտույտ։ Պտույտների թիվը,



Նկ. 11. Մետաղե ողային պտուտակ (պըոպելլեր)։

հետեաբար և պտուտակի քարշումն ու ինքնաթիռի արագությունը ողաչուն կարող ե կանոնավորել։ Ներգործելով ձախ ձեռքով մոտորից յեկող փոքր լծակների վրա, ողաչուն կարող ե պակասեցնել կամ ավելացնել գլանների մեջ մտնող դյուրավառ խառնուրդի քանակը և այսպիսով թուլացնել կամ ուժեղացնել այն պայթյունների ուժը, վորոնք ստացվում են զլանի մեջ խառնուրդի բոցավառվելուց։

Մի շաբաթ անոթներ ողաչույին հնարավորություն են տալիս դատելու մոտորի ճիշտ աշխատանքի կամ նրա թերությունների մասին։


ԻՆՉՊԵ՞Ս Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԹԻՒԻ ԴԵԿԱ-  
ՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.

իհարկե ինքնաթիռը զեկավարել ավելի գժվար  
ե քան, որինակի, մոտորավոր նավակը կամ ավտո-  
մոբիլը: Նավակը կամ ավտոմոբիլը պետք է  
դարձնել միայն դեպի ճախ կամ աջ, վորի համար  
նավակը ունի մի դեկ, իսկ ավտոմոբիլի-չոփերը  
շուռվախի ողնությամբ անիշները դարձնում ե  
դեպի այս կամ այն կողմը: Բայց չե՛ վոր ինքնա-  
թիռը պետք է կարողանա դարձնել վոչ միտյն դե-  
պի այս կամ այն կողմը, այլ և ուղղել մերի դեպի  
ներքեւ, մերթ դեպի վեր: Սա դեռ քիչ է, յեթե  
ինքնաթիռը թեքվի-նրան պետք է կարողանալ  
ուղղել:

Ուրեմն քանի՞ո հատ ղեկային հարմարնեներ են  
հարկավոր ինքնաթիռը ղեկավարելու համար։  
Պարզ է, վոր հարկավոր և յերեք՝ ուղղության ղեկ,  
խորության ղեկ և ելեբոններ (նկ. 5)։ Բայց ինչ-  
պես են նրանց կառուցված և ինչպես կարող ե  
ողաչուն նրանց շարժել (նկ. 12)։

ինքնաթիւի ուղության զեկը կառուցված ե  
ճիշտ այնպես, ինչպես սովորական նախակի զեկը:  
Դրանից դեպի ողաջուն են ձգվում յերկու բարակ  
տրոսներ և ամբացվում են խոտորնակի հորիզոնա-  
կան լծակի ծայրերին, վոր գտնվում է ողաջույնի  
վոտքերի տակը: Վորովհետև այս լծակը կարող է  
սլոտվել հեղույսի վրա, ապա և ստացվում է տյն-  
պես, վոր ողաջուն, սղմելով վոտքերով, կարող ե  
ճիշտությամբ դարձնի ուղղության զեկը, ուրեմն  
նաև դարձնել ինքնաթիւը դեպի այս կամ այն  
կողմը:

Առության դեկը կարելի յէ թեքել դեպի վեր և դեպի վար։ Այս դեկից նույնական դեպի ողաչուն են ձգված բարակ տրամաներ և հատուկ ձեռվ ամրաց-



Նկ. 12. Խնքնաթիւի և նրա դեկտաբնան ողբաների կառոցվածքը (սպարի վրա պարզության համար կարծիք թիւ պորեւած է Պյուդիլաժ և Պյուդիլի պատշաճքը): 1. Մոռող. 2. Մոռողի պահանգ. 3. Պահանոն բնինինի համար. 4. Պահանութան յուրաքանչյուր. 5. Տախտակ անոթներով. 6. Շքրամա. 7. Քաղցի կանոնակար- իչ. 8. Եկեղեցներ. 9. Հոգածի եճակ ուղղության զեկու շարժմերու համար. 10. Լծակ խոռոչթան դեմք ու եւելուններու գեղաւառնություն համար (բնանակ):

վում են այն ուղղաձիգ լծակին, վորը գանվում ե  
ողաչույի առջեւ։ Այս լծակը կառուցված է հողակա-  
պերով և կարող է թեքվել դեպի բոլոր կողմերը։

Այս լծակը սովորաբար ուղղակի կոչվում ե բռնակ, և դրան մենք այդպես ել կանգանենք: Այսպես ահա յեթե ողաչուն բռնակը թեքում ե դեպի առաջ, կամ ինչպես ասում են, յեթե ողաչուն «տալիս ե իրենից» ապա խորության զեկը թեքվում ե դեպի ցած և ինքնաթիռը թեքում ե իր քիթը դեպի ցած և սկսում ե իջնել: Ընդհակառակը, յեթե ողաչուն բռնակը ձգում ե դեպի իրեն, ինչպես ասում են, «բռնակը վերցնում ե իրեն վրա» ապա խորության զեկը և ինքնաթիռի քիթը բարձրանում են և մեքենան ինքը սկսում ե վեր բարձրանալ:

Ելերոններից դեպի ողաչուն են նույն պես ձգված տրոսներ, վորոնք ամրացվում են նույն բռնակին, վոր գանգում ե ողաչույի առջև: Ելերոնները շարժվում են այն ժամանակ, յերբ ողաչուն այս բռնակը թեքում ե դեպի աջ կամ դեպի ձախ: Յեթե ողաչուն բռնակը թեքում ե դեպի ձախ, ապա և ինքնաթիռը թեքվում է ձախ կողմի վրա, իսկ յեթե—դեպի աջ, ապա ինքնաթիռը թեքվում է աջ կողմի վրա:

Ողաչույին սովորաբար հարկ ե լինում միաժամանակ շարժել յերկու զեկերն ու ելերոնները: Ռատի ամենից հաճախ լինում է այնպես, վոր ողաչուն բռնակը թեքում ե և դեպի մի կողմը և դեպի առաջ, կամ դեպի մի կողմը և դեպի յետ, այսինքն բռնակով շեղակի շարժումներ ե անում: Ողաչուն բռնակը սովորաբար բռնում ե աջ ձեռքով և միայն հազվագույտ դեպքում, յերբ պետք ե լինում ճիշտ գործադրել, նա կարող ե ողնել նաև ձախ ձեռքով: Բայց սովորաբար հարկ ե լինում բռնակով շատ փոքր շարժումներ կատարել, և ժա-

մանակակից ինքնաթիռների վրա այդ հեշտ ե անել (քիչ ուժ ե պահանջվում):

Զախ ձեռքով ողաչուն զեկավարում ե վիոքը լծակներով, վորոնք կանոնավորում են մոտորի աշխատանքը: Նույն ձախ ձեռքով ողաչուն սովորաբար միացնում և անջատում ե (անջատիչի միջոցով) ելեկտրական հոսանքը, վորը մագնիտոյից անցնում ե մոտորի մոմերին: Նույն ձախ ձեռքով ողաչուն զեկավարում ե նաև մի քանի ուրիշ անոթներն ու հարմարանքները, վորոնք պահանջում են այդ:

Բայց ինչու ինքնաթիռը փոխում ե իր թռիչքը, յերբ ողաչուն շարժում ե վորեւ և զեկը կամ ելերոնները: Իսկ ինչո՞ւ նավակը դառնում ե դեպի աջ,



Նկ. 13. Ելերոնների գործողությունը: Յերբ աջակողմյան ելերոնը բարձրացած ե, իսկ ձախակողմյանը չէցեցրած, ապա հանդիպական ողի ճշնաւմը (այդ ցույց ե արված սլաքներով) ձախ ելերոնի վրա ափելի մեծ կիսու, քան աջը վրա, զրա հնատեանքով ձախ թեւ կրտքանատ, իսկ աջը կը չներ:

յերբ զուք դարձնում եք զեկը դեպի աջ: Նրա համար, վոր ջուրը սկսում ե ճնշել նրա աջ կողմի վրա, դեպի աջ: Նույնը տեղի յե ունենում նաև ինքնաթիռի հետ, միայն այստեղ զեկի վրա ճնշում ե վոչ թե չուրը, այլ ողը:

13-րդ նկարի վրա պատկերացրած ե մի ինքնառ թիռ, վորի ձախ ելերոնն ողաչում իջեցրել ե, իսկ աջը՝ բարձրացրել: Ի՞նչ տեղի կունենա այս դեպքում: Հանդիպական ողը, վորը նկարի վրա ցույց է տրված ոլաքներով, ավելի ուժեղ կճնշի ձախ թևի վրա, իսկ աջի վրա՝ ընդհակառակը, ավելի թույլ վորովհետև այստեղ ողը կանցնի բարձրացրած երրոնի տակից պարզ ե, վոր ձախ թևը կբարձրանա, իսկ աջը կիջնի:


Այսպես ե զեկերի, և ելերոնների գործողությունը: Փայտի ինքնաթիռների այս զեկերն ու ելերոնները մասամբ պատրաստվում են պողպատե խողովակներից, մասամբ ել փայտե ձողերից, իսկ կմախքը ծածկվում է կամ կտավով, կամ ֆաներով (ինչպես թերեն ու Փյուզելյաժը): Մետաղյա ինքնաթիռների զեկերի և ելերոնների կմախքները չինվում են մետաղից և ծածկվում են դյուրավումինե բարակ թերթերով:

### ԻՆՉՊԻՍԻ ԱՆՈԹՆԵՐՈՎ Ե ՍԱՐՔԱՎՈՐՎԱԾ ԻՆՔՆԱԹԻՌԼ

Ողային մեքենայով թռիչքը նրա հսկայական արագությամբ ողաչույից պահանջում ե մեծ ուշադրություն: Ինքնաթիռի, և մոտորի զեկավարությունը հետացնելու համար ինքնաթիռի վրա միշտ կան մի շարք անոթներ (նկ. 14): Մի փոքր խոսենք նրանցից ամենազլավորների մասին:

Ողաչուն միշտ պետք ե իմանա, թե ինչ բարձրության վրա յե նա թռչում: Սրա համար ծառայում ե մի անոթ, վորը կոչված է ալտիմետր: Ալտիմետրը նույնն է, ինչ վոր բարոմետրը (ծանրաչա-

փը), վորի մասին շատերն են լոել: Բարոմետրը ցույց է տալիս մթնոլորտային ճնշման փոփոխումը: Բայց վորովհետև բարձրության հետ միասին ողը նուրանում է, նրա ճնշումն պակասում է, տապայշդպիսի անոթը, հետեաբար, կարող է հեշտու-



նկ. 14 Ողաչուրի կոքինի ներսը: Սոջեռմ գանգում ե վե ստուգիչ տախտակը անոթներով: Դրանցից ամեսակտրեռներս են՝ 1 ժամացույց 2 կոնտակտ, 3. Մոտորի պտույաների հարցիչ և Սլայմետր, ծ. Թռիչքը, սրագո. թյան ցուցիչ, 6. Թենզիչներ և յուղի պահամունքներում ճնշումներ ցուցիչները, 7. Պահամաններում յեղած բնագինի և յուղի քանակի ցուցիչները, 8. Կողմանցայց, 9. Քարտեզը նկարի կենարոնում յերկում ե զեկավարման լծակը (բռնակը), իսկ ներքենում յերեսում ե գոտիի լծակը Զան կողքի վրա յերկում են մատորի զեկավարման լծակները.

թյամբ ցույց տալ նաև բարձրությունը։ Ողաչուն  
բարձրանում ե, ալտիմետրի սլաքն ել դանդաղ սո-  
պում ե և ցույց ե տալիս նրան բարձրությունը  
մհարներով։

Գոյություն ունի ևս մի անոթ— բարոգրաֆ,  
վորը կառուցված ե նույն հիմունքներով, ինչ վոր  
ալտիմետրը, բայց նա ինքն ե դրում թուչքի բարձ-  
րությունը հատուկ բլանկի (թղթի) վրա կոր գծի  
ձևով։

Ողաչույի համար չափազանց կարեոր ե լինում  
յերեմն իմանալ իր թուիչքի արագությունը։ Գոյու-  
թյուն ունի մի անոթ, վորը ցույց է տալիս, թե քո-  
նի կիրածետը ե անցնում ինքնաթիռը տվյալ մոտեն-  
առում։ Այդ անոթի կառուցվածքը բարդ ե, բայց  
նու հիմնիմած ե հանդիպական որի հոսանքի գործո-  
ղության վրա։ Վորքան արագ ե խոչում ինքնաթի-  
ռոր, այնքան ավելի մեծ ե հանդիպական որի (քո-  
մու) հոսանքի ուժը, իսկ զա հատուկ ձևով ներդոր-  
ծում ե անոթի վրա։

Այս անոթը կոչվում է արագության ցուցիչ։

Ողում թուիչքի կողմորոշման համար ողաչուն  
հաճախ ողտվում ե կողմնացույցով, վորը հատ-  
կադեօ անհրաժեշտ ե լինում մեծ թուիչքների ժա-  
մանակ կամ ամպերի վրայով թուչելիս, յեր-  
կիրը չի յերեռում, նույնաես և գիշերային թուիչք-  
ների ժամանակ։ Ինքնաթիռային կողմնացույցի  
կառուցվածքն ավելի բարդ ե, քան առվորական  
յերկրայինի կառուցվածքը, վորովհետեւ հարկ ե  
լինում միջոցներ ձեռք առնել, վորպեսզի կողմնա-  
ցույցի մագնիսների վրա չաղղի մոտորի յերկաթե  
մասսան, վոր գտնվում է համարյա դրա կողքին։

Յերբ յերկիրը յերեռում ե, և թուիչքի ճանա-

պարհին կան, ինչպես ասում են, կողմորոշ կետեր,  
որինակ յերկաթգիծ, գետեր, լճեր, գյուղեր, քա-  
ղաքներ և այլն, ապա ողաչուն ողտվում ե ֆարտե-  
զից։ Քարտեզը դրված է հատուկ քարտոնապահիչի  
մեջ այնպես, վոր ողաչուն կարող է քարտեզի վրա  
միշտ տեսնել այն տեղը, վորտեղով նա տվյալ  
բովելին իսկապես թուչում ե։ Քարտեզը միշտ հար-  
կավոր է ողաչույին այերողբումից դուքս յուրա-  
քանչյուր թուիչքի ժամանակ։

Ինքնաթիռների, հատկապես մեծ ինքնաթիռ-  
ների վրա լինում են անոթներ, վորոնք կոչվում են  
կրենաչափեր։ Կրենաչափը ցույց է տալիս, թե վոր  
կողմն ե թեքվել ինքնաթիռը։ Կրենաչափի կառուց-  
վածքի եյությունը նույնն ե, ինչ վոր սովորական  
հարթաչափին, վորից որինակ, ողտվում են  
հյուսները։ յեթե հարթաչափը թեկուզ անշան չա-  
փով մի կողմը թեքենք, ապա ոդի բշտիկը կտեղա-  
փոխվի հակառակ կողմը։ Ահա մոտավորապես  
այսպիսի հարթաչափի ե նաև ինքնաթիռի վրայի  
կրենաչափը։

Իհարկե, ինքնաթիռի վրա ողաչույի առջեւ  
պետք ե լինի ժամացույց։

Մոտորի դեկավարման համար ամենից առաջ  
ծառայում է կրնակալոր, — դա ելեկտրական հոսան-  
քի անջատիչ է; վորի մասին մենք արդեն խոսել  
ենք։

Ողաչուն յուրաքանչյուր մոմենտին պետք ե  
իմանա, թե քանի պտույտ ե անում մոտորը մի  
բովելում։ Դրա համար գոյություն ունի պտույտ-  
ների հաշվիչը։ Այս անոթի սլաքը ամեն ժամանակ  
ցույց է տալիս ողաչույին, թե ինչպես ե աշխատում  
մոտորը։ Նրա վորքը կամակորությունների գեղ-

քում, սլաքն սկսում ե թռիչքներ կատարել, իսկ յեթե մոտորն աննկատելի կերպով սկսում ե թուլանու, ապա իսկույն և յեթ անոթն այդ ցույց ե տալիս:

Վորպեսզի բենգինը պահամանից անցնի մոտորի մեջ (կարբյուրատորի միջով), պահամանի մեջ ավտոմատորին ող ե մղում, վորը ճնշում ե բենգինի մակերեսույթի վրա և հրում է նրան խողովակների միջով կարբյուրատորի ներսը: Յեթե վորեն պատճառով ճնշումը չբավականացնի (փշանա պոմպը), ապա բենգինը պահանջված քանակությամբ ներս չի մտնի և մոտորը կարդ ե թուլանալ կամ բոլորովին կանգնել: Դրա համար մի անոթ-ճնշման ցուցիչ կա-դա ողաչույցին ցույց ե տալիս, թե ավալ մոմենտին պահամանում ինչպիսի ճնշում կա:

Այսպիսի ցուցիչներ են՝ լինում յերեմն նաև յուղի համար:


Մոտորը գործարկելու համար սովորաբար ողտվում են լրացուցիչ մագնիտոյով, վորը կոչվում ե գործարկիչ մագնիտո: Ողաչուն նրան պտտեցնում ե ձեռքով բռնակի միջոցով: Պահամանի մեջ ող մղելու համար բացի ավտոմատ պոմպից, վոր գործում ե մոտորից, կա նաև ձեռքի պոմպ, վորը գործ ե ածվում առաջինը փշանալու դեպքում:

Բոլոր անոթները գտնվում են հատուկ տախտակի վրա (վերստուգիչ տախտակ), ողաչույցի առջեռում, իսկ այնպիսի հարմարանքները, ինչպիսին են ձեռքի պոմպը և գործարկիչ մագնիտոն գտնվում են ողաչույցի կողքին: Գիշերային թռիչքների ժամանակ անոթները լուսավորվում են ելեկտրական լամպերով:

## ՀԻԴՐՈԻՆՔՆԱԹԻՌ ՑԵՎ ԱՄՓԻԲՅԱԼ

Յեթե ցամաքային ինքնաթիուը հարմարեցնենք այնպես, վոր նա կարողանա բարձրանալ ջրի վրայից և իջնել ջրի վրա, ապա կատացվի ջրային ինքնաթիուը, կամ ինչպես անվանում են, հիդրոինքնաթիու:

Հաճախ այդպես ել անում են. անիվների փոխարեն ցամաքային ինքնաթիուին հարմարեցնում են մեծ լողաններ (նկ. 15), վորոնց ներսում ոդ ե:




Նկ. 15. Լողաններով հեղութնքնաթիու

Ինքնաթիուը նրանցով վազում ե ջրի վրայով, ճիշտ այնպես, ինչպես գահուկներու: Լողանները շինուում են կամ ֆաներից, վոր ծածկվում ե հատուկ բաղադրությամբ, վորպեսզի նրանք ջուր չծծեն, կամ թե դյուրալումին մետաղից:

Բայց հաճախ հիդրոինքնաթիուը կտուցում են մի փոքր այլ կերպ: Այն ե, սովորական ֆյուզելյաժի փոխարեն շինում են մի նավակ՝ վորի ձեւ

նման ել լինում և ֆյուղելյաժին և ձկան։ Այս նա-  
վակին ամրացնում են թերե մոտորով ու ոդային  
պտուտակով, և ստացվում ել քոչող նավակ (նկ. 16)։ Հիդրոինքնաթիռի այս տիպարը հաճախ  
ավելի համար ել լինում, գլխավորապես ծովային



Նկ. 16. Հիդրոինքնաթիռ—թռչող նավակ։ Կերաթռուչքը առմենաթը։

ալիքների վրայից բարձրանալու և իջնելու համար։  
Նավակը շնչում է կամ փայտից և ծածկվում և  
փաներով, կամ թե դյուրալյումինից։


Հիդրոինքնաթիռի կառուցվածքն ու դեկո-  
զարությունը նույնն ե, ինչ վոր ցամաքային ինք-  
նաթիռը։

Ի հարկե ամենահարմար ինքնաթիռը կլիներ  
այնպիսին, վոր նրանով կարելի լիներ իջնել ու  
բարձրանալ ինչպես ցամաքի, այնպես ել ջրի վրա։  
Այսպիսի ինքնաթիռներ կան։ Դա յերկրաջրային  
ինքնաթիռն ե, կամ ինչպես անվանում են ամֆի-  
բիա (նկ. 17)։

Ինչպիս ե դա կառուցված։

Նավակային հիդրոինքնաթիռի նավակին կող-

քին և նրա հատակից բարձր հատուկ ձևով անիվներ  
են ամրացնում, բայց այնպես, վոր ոդաչուն ոդում  
իրեն տեղից կարող ե այդ անիվները հատուկ բռնա-  
կի ոդնությամբ բայց ցանկության դուրս հանել։



Նկ. 17. Ամֆիբիա (յերկրաջրային ինքնաթիռ)։

Բարձրանում ե նա, որինակ, ջրի վրայից ինչպես  
սովորական ինքնաթիռով, և յեթե ուղում ե իջնել  
ցամաքի վրա, ապա ողում իջնեցնում է անիվները  
նավակի հատակից ցած։ Ընդհակառակը, ցամաքից  
բարձրանալուց հետո ողաչուն ողում կարող ե  
բարձրացնել անիվները և իջնել ջրի վրա։

Վոր սա հարմար եպարդ ե բոլորին։ Բայց  
այս ինքնաթիռները—ամֆիբիաները լայն տարա-  
ծում չունեցան։ Դժվար է շնոր այնպես, վոր այդ-  
պիսի մեքենա փոխարինի և լավ ցամաքային ինքնա-  
թիռին և լավ հիդրոինքնաթիռին։ Սակայն այս-  
տեղ հնարավոր են ելի լավ կատարելագործում-  
ներ։

## ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ ԶԱՆԱԶԱՆ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ


Ընդհանուր գծերով բոլոր ինքնաթիւները միատեսակ են, բայց և այնպիս նրանք տարբերվում են իրարից և իրենց կառուցվածքով, և ձևով, և չափերով, և մոտորների հզորությամբ, և այն նյութով, վորից նրանք շինված են, նույնպես և նրանով թե ինչ նպատակի համար և ծառայում տվյալ ինքնաթիւը (զանազան տիպարներ)։

Ինքնաթիւները ներկայումս շինվում են զանազան կառուցվածքի։ Կան ինքնաթիւներ թևերի մի շարքով՝ մոնոպլաններ (նկ. 18), յերկու շարքով՝ բիպլաններ (նկ. 5), և ավելի հազվադյուր գեղքում յերեք շարքով՝ տրիպլաններ։ Կան ինքնաթիւներ, վորոնց թևեր ամրացվում են ֆյուզելյաժին մութակներով դեմկալներով և արուներով, կան նաև ինքնաթիւներ, ազատարար թևերով, վորոնց մասին արդեն հիշատավել ե վերևում։ Ինքնաթիւների մեծ մասը կառուցվում է ֆյուզելյաժով, նկարագրածի նման, բայց մի քանիսներն՝ ֆյուզելյաժն ունեն նավակի ձևով։ Միքանիսն ունեն մեկ հատ ողային պտուտակ, մյուս ներն ունեն յերկուական (նկ. 18) և ավելի։

Այժմ ինքնաթիւները շինվում են շատ տարբեր չափերի-սկսած մի քանի տասնյակ տոնների, հասնող քաշ ունեցող հսկայական մինչենաներից մինչև փոքր ու թույլ ուժ ունեցող ամբիյետկաներ։ Մեծ ինքնաթիւների թևերի յերկարությունը հասնում է մինչև 30-40 մետրի, իսկ փոքրերինը յերբեմն 6-8 մետր ե։ Մեծ ինքնաթիւնի մոտորի հզորությունը հասնում է մինչև 6,000 ձիու ուժի և ավելի, իսկ ամբիյետկաների մոտորները յերբեմն լի-

նում են ընդամենը 20 ձիու ուժանի և նույնիմակ ավելի պակաս։

Մեծ ինքնաթիւները կարող են մի քանի տոնն ընդունել (նկ. 19)։ Իսկ ավելետկան հաշված են միայն մի մարդու համար (նկ. 20)։



Նկ. 18. Յերկարությանի ինքնաթիւն



Նկ. 19. Ժամանակակից ինքնաթիւների ընդունելից մոտական թիւների ընդունությունը Այս ընդունելիությունը միայն մի բնորդին գերազանց է 2000 կիլոմետր (համարյա 175 մություն)։ Նկատվ կը ը յերեսում ու առկա ընդուն գործարական և ինքնաթիւնի պահանջները լցում համար,

Մոտ անցյալում ինքնաթիւները կառուցում

Եյին համարյա բացպոտապես փայտից և ծածկում  
Եյին կտավով, իսկ այժմ քանի գնում, այնքան ու-  
զելի հաճախ են անցնում մետաղյա ինքնաթիւների  
կառուցման: Այստեղ ամենից շատ գործադրվում  
է ալյումին մետաղի և չիչին քանակությամբ մի  
քանի ուրիշ մետաղների ձուրվածքը: Այս ձուրվածքը  
կոչվում է դյուրալյումին: Նա թեթև և, դիմացկուն  
և շատ լավ է յենթարկվում մշակման: Կան ինք-  
նաթիւներ ամբողջապես կառուցված պողպատից,



Նկ. 20. Ամենափոքք ինքնաթիւներից մեկը: Մոտարը մոտոցիկլետային  
և ընկամենը 12 ձիու ուժանոց:


բայց պողպատը դեռ քիչ է գործադրվում, քան  
դյուրալյումինը: Ապագան, իհարկե, մետաղյա  
ինքնաթիւներինն է:

### ՌԱԶՄԱԿԱՆ ԽՆՔՆԱՐԴԻՇԵՐ

Ներկայումս բոլոր կառուցվող ինքնաթիւները  
բաժանվում են ապօնական և քաղաքացիական ինք-  
նաթիւների: Ինչպես առաջինից, այնուեւ ել յերկ-  
րորդից կան մի շարք տիպարներ: Նայած նշանակ-  
մանը, մեքենային տրվամ և այս կամ այն տառնձ-  
նահատկությունները: Քննարկենք ինքնաթիւների  
պէսավոր տիպարները:

Առօնական ինքնաթիւներից շատ հետաքրքիր  
և կործանիչ տիպարի ինքնաթիւնը: Դա սովորա-

բար մի տեղանի յե, բայց շատ հզոր մեքենա յե (մո-  
տորը 400 ձիու ուժից վոչ պակաս): Ժամանակա-  
կից կործանիչի արագությունը հազվագույտ դեպ-  
քում է մեկ ժամում 250 կիլոմետրից սուրբ լի-  
նում, իսկ 5000 մետր թուիչքի բարձրությանը նա  
հասնում է ընդամենը 15 բռպեկում և ավելի կարճ  
ժամանակում: Կործանիչի ինքնաթիւնը շատ զյուրա-  
դարձ և նրանով կարելի յե ողում թափար դալ  
լինչպես ուղում ես: Այս բոլորը նրան հնարավորու-  
թյուն են տալիս ողային մարտ մղել: Ինքնաթիւնը  
սպառադինված է յերկու գնդացիրներով, վորոնք  
կրակում են գեղի առաջ «պուռակի միջով»  
(Նկ. 21 և 22): Գնդացիրը հատուկ ձևով փոքր ա-  
տամնավոր անիվներով միացած է մոտորի լիսենի



Նկ. 21. Ժամանակակից միտեղանի կործանիչ-ինքնաթիւնը Մոտորը—  
400 ձիու ուժ ունի Առագությունը մոտ 300 կիլոմետր և մեկ ժամում  
Սպառադին-ըլլունն է 2 գնդացիք, վորոնք կրակ և մենապուռակի մշ-  
ջով, այսինքն գեղի առաջ (գնդացիրները թրեռում են նկարի վրա):

Հետ և կառուցված ե այնպես, վոր ձիգերը տեղի յեն  
ունենում այն ժամանակ, յերբ պոտուտակի թաթը  
սնցել կամ չի հասել գնդակի թուիչքի ոգին: Կրա-  
կելու ձգանը գանվում է այն բռնակի վրա, վորով  
ողաչուն ղեկավարում է ինքնաթիւնը:

Ամբաձդության համար նշանակված ինքնութիւնը կամ ոմբակիրը միշտ մեծ հզոր ինքնաթիւն և լինում (նկ. 23): Ռումբերը սովորաբար ամբաց-



Նկ. 23. Ժամանակակից էլլուստրացիոն պատկերը՝ առաջնական սովորաբար ամբացը՝ նկարում գողուց ինեւրության ժամանակ:

փելի «չեմողանը» ընկնում ե այն նշանի վրա, վորի վրա նշան ե դրել ողաչուն: Պաշտպանվելու համար ոմբակիրը սպառաղինված ե գնդացիրներով:




Նկ. 23.

Տորպետոկիրը՝ ինքնաթիւնը Փյուզելյաժի տակից տանում ե ինքնաշարժ ականը: Թուշելով դեպի թշնամու նավը՝ նա վայր ե գցում ականը, վորը ջրի մեջ արդեն ինքն ե չարժվում նավի ուղղությամբ, յեթե, իհարկե, նա ճիշտե ուղղված յեղել (նկ. 24):


Հետախուզական տիպարի ինքնաթիւնը (նկ. 25) սովորաբար յերկտեղանի հզոր մեքենա յեւ սպառավիճած ե գնադացիրներով ու կահավորված ե ողաւուսանկարչական ապարատով հակառակորդի դիրքերը լուսանկարելու համար և սադիրուսուազով (յերբեմն ել ուղիո հեռախոսով): Եյսակա պետք ե նկատել, վոր սադիսն կարող ե լինել և ուրիշ տիպարի ինքնաթիւնների վրա: Թագիոյի համար դինամո մեքենան սովորաբար աշխատում ե վորքիկ վրա: Յերբ պետք ե վայր գցել ոռամբերը, ոմբանդիզը միայն սեղմում ե փոքրիկ լժակը, և սարսակատարում ե բարակ ու յերկար տրոսը, վոր իջեց-

ված և ինքնաթիւով և ծայրին կազմված ե մի վոք  
րիկ բռու:



Նկ. 24. Ական կ ը-հեղլոփնչնաթ, ոը ական գցելու մոմենտու

Գոյություն ունեն նաև ռազմական ինքնաթիւով  
մի շարք այլ տիպարներ, բայց նրանք քիչ բանով



Նկ. 25. Ժամանակակից յերկտեղասը ռազմական հետախույզ-հեղոռնաթ  
նաթուու նկարի վրա յերեսմ և շետեք գնդացրը:

Են տարրերվում նկարադրած ինքնաթիւոնից տարր ուստի իբրներով: Շտո հաճուխ մարդատար ինքն-Համարապես բոլոր ռազմական ինքնաթիւոններին առաջ լինում ե նաև ռազիու:

առանձնահատկությունն ե նրանց մեծ հղորությունը, սղասանազինությունն ու հատուկ կահավորումը:

### ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՆԲՆԱԹԻՈՒՆԵՐ

Ներկտյումս ինքնաթիւոնների գործադրության  
առարիջն զնալով ամելի ու ավելի աճում է: Վոր-  
պես տրանսպորտի միջոց, գյուղատնտեսության,  
արդյունաբերության, գիտության մեջ-ինքնաթիւոն  
ամենուրեք գործադրություն ե դառնում: Ինքնա-  
թիւոր փորսիս ողացին տրանսպորտի միջոց իհարկե  
առաջին տեղն ե րոնում:

Փոստա-մարդատար ողացին գծերով տյժմ ար-  
դեն պատաճ ե ամբողջ Ցեմուստան ու Ամերիկան, և  
տարեց տարի այդ գծերի թիվն աճում է:


Մարդատար ինքնաթիւոը (նկ. 26, 27) հաղոր-  
դակցության մատչելի միջոց ե դառնում: Որինակ,  
մեր ողացին գծերում ինքնաթիւով թուշելու ար-  
ժերը նույնն է, ինչ վոր դնացքի վասինուկ վաղոնում:  
Բայց որպատ խնդիրն ե՝ ել ավելի շատ իջեցնել թուշ-  
քի արժեքը:

Մարդատար ինքնաթիւոններն ունենում են շատ  
դանական չափեր ու կառուցվածքներ: 26-րդ նկարի  
վրա յերեսմ ե մարդատար ինքնաթիւի կառուց-  
վածքը: Աւզեկորները նստած են հարմար բաղկա-  
լուններում: Աւզեկորների կորինք (սենյակը) լու-  
սավորվում ե եղեկարականությամբ, իսկ յերբեմն  
ել տարացվում է, կա բևենների (բազաֆի): Հարմար  
հատուկ գետեկարան ե զուղարան: Մեծ ինքնաթիւո-  
նների վրա յերեմն լինում ե նույն խոկ բուֆետ

ների վրա յերեմն լինում ե նույն խոկ բուֆետ  
տարրերվում նկարադրած ինքնաթիւոնից տարր ուստի իբրներով: Շտո հաճուխ մարդատար ինքն-  
Համարապես բոլոր ռազմական ինքնաթիւոններին առաջ լինում ե նաև ռազիու:


Մարդատար ինքնաթիռը հազվադյուր դեպքում է ունենալու 10-12-ից ավելի տեղ։ Սա բացա-

ժեռնտու չեն։ Յեկ իրոք ողային հաղորդակցությունը դեռ այնքան գարգացած չեն, վոր մեծ ինքնաթիռի բոլոր տեղերն գրավված լինեն։ Սակայ-



նկ. 26. Ժամանակակից ինքնաթից լեռքը՝ սերվելն կտուցվածքը (յորիանակի կորուածք)։ 1. Մուտքայի 2. Ողաջոյը և միջանիկը տեղադրությունը 3. Կարտին 9 ուղեղութիւնների համար, 4. Ելեկտրական 5. Զաւքարան, 6. Բարձրացման բաժանումները։

տըրվում է յերկու պատճառներով՝ նախ մեծ ինքնաթիռի կառուցումն ու ինամքը շատ ավելի բարդ է, և յերկրորդ՝ շատ մեծ ինքնաթիռները դեռև-



նկ. 27. Ժամանակակից մարդատար ինքնաթիռի կարենը։

պետք է թուչել չվացուցակի համաձայն, և չես սպասի ուղեկորներին։ Թուչքն առանց այն ել թանկ է նստում, իսկ յեթե, ասենք, 30 տեղից միայն 10 գրավված լինեն, ապա թուչքը մեծ վնաս կրերի։

Ամենից հաճախ մարդուտար ինքնաթիռները չինվում են 8-10 մարդու համար, բայց վերջին ժամանակներս արգել սկսում են կառուցել շատ մեծ ինքնաթիռներ, փորոնք կարող են փոխադրել մի քանի տասնյակ ուղեվորներ։

Գլխավորապես համար են փոստ փոխադրելու ինքնաթիռներ։ Մեծ բեռներ գեւ քիչ են փոխադրում թանդության պատճառով։

Կան սանիտարական ինքնաթիռներ վիրավորներ ու հիվանդներ փոխադրելու համար։ Կան թերև տիսուրի ինքնաթիռներ ճանապարհորդություն (տուրիզմի) համար։ Կան սովորացյին ինքնաթիռներ։ Կան ինքնաթիռներ վնասատուների գեմ պայքարելու համար և ուրիշ շատ ինքնաթիռներ, բայց նրանց տիպարը շատ քըով և տարբերվում նկարագրածներից։


## ԻՆՔՆԱԹԻՌԸ ԹԵՒԶՔԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՐՍՈՏԵԼԸ

Այսպիսով, մենք քննեցինք, թե ինչու յե ինքնաթիռը թռչում, ինչպես ենա կառուցված, ինչպիսի ինքնաթիռներ կան։

Բայց ինչպես ե տեղի ունենում ինքը՝ թռիչքը։ Ի՞նչ ե անում ոգաչուն, վոր զեկավարի այդ հրաշալի ճեքենան։ Ինչպես ե այդ մեքենան հանդիսու և հանդարտ ուղիղ գծով թռչում, մեկ-մեկ ել պղում այնպիսի «նոմերներ» ե անում, վոր զեկաված անդամ մարդ նայելիս զարհուրում եւ Բայց ամենից առաջ ունենար, թե ի՞նչպես ե ինքնաթիռը թռիչքի պատրաստվում։

Յերբ ինքնաթիռը դուրս ե բերվում անդարից (անգար կոչվում ե այն շինությունը, վորտեղ պահ-

փում ե ինքնաթիռը), ապա ողաչուն նստում ե իր տեղը, իսկ մեխանիկը սկսում է բանեցնել մոտորը։ Աղաջուն լայն փոխով կապվում ե նստելու տեղին։




Նկ. 28. Ինքնաթիռը թռիչքի համար պատրաստելու Մոտորը  
բանի գցելը

Մեքենայի անխմների տակը դրվում են փայտի փոքրիկ կշռվեներ, վորոնք պահում են ինքնաթիռը մոտորը աեցում փորձելու ժամանակ (նկ. 28)։

Յերբ մեխանիկը վերջին անդամ զննում եւ - թե ամեն ինչ արդյոք սարքին ե, և մի փոքր րենզին ե լցնում մոտորի զլանների մեջ, ողաչուն ստուգում ե զեկավարությունը ու անոթները։ Այնուհետեւ մեխանիկը, բռնելով պատրաստի թաթը, մի քանի անգամ պատեցնում ե մոտորի լիսեոը, վորպիսցի միոցները մտնեն գլանների մեջ, և նրանց մեջ լցրած բենզինը լավ խառնվի ողի հետ, վոր մանում

Ե ներթողի կամույրի միջով։ Այնուհետև մեքենա-  
վարը հարցնում է ոդաչույին՝ դուք պատրա՞ստ եք։  
Դրական պատրաժիսան ստանալով, նա ավելի



Ա. Հ. Մոռորի գործում տեղում

հարմար բռնելով պտուտակի թաթի ծայրից, բարձ-  
րաձայն ասում ե՝

— Կոնտակտ։

Այս կարճ բացականչությունով մեխանիկը

խնդրում է, վոր ողաչուն միացնի կոնտակտը,  
այսինքն դարձնի ելեկտրականությունը վառելու  
անջտիչը։

Ողաչուն միացնում է կոնտակտը և այդ ժամա-  
նակ բարձրաձայն ասում ե՝

— Կոնտակտ կտ։

Մեխանիկը, վորն արդեն վաղուց եք սկսու-  
թափել (նկ. 29) այժմ ուժեղ ու արագ կերպով  
ձգում և թաթը և յետ և թոշում պտուտակից մահա-  
վանդ յեթե մոտորը միանդամից սկսի տշխատել։  
Յերեմն այս գործողությունը հարկ և լինում  
կրկնել մի քանի անգամ, մինչեւ վոր մոտորը սկսի  
աշխատել։

Այսպիսով մոտորը բանում է։ Ողաչուն կա-  
նոնավորում և նրա պառույտները, աստիճանաբար  
ավելացնելով «գաղը» (դյուրավառ խառնուրդ),  
ականջ դնելով մոտորի աշխատանքին և ստուդիլով  
նրան անոթների միջոցով (նկ. 29)։ Յերբ ողաչուն  
դտնում է, վոր մոտորը բավականաչափ տաքացել ե  
ու միանդամայն լավ և աշխատում, կարելի յե  
թոշել։

Ի՞նքնական ԲԱՐՁՐԱՆԱԼ, ԹՌՉԵԼԸ ՏԵՎ, ԻԶ-  
ՆԵԼԸ

Մոտորը փորձված է։ Բայց նախքան թռչելը  
պետք է դեռ վագել մինչեւ ստարտի (բարձրանալու)  
տեղը։ Ողաչուն սկսում է բանեցնել մոտորը փոքր  
զաղով, մեխանիկներն անիմների տակից հավաքում  
ևն փայտե իշուները և թեթեակի կերպով պահում  
են ինքնաթիւը թերերի ծայրերից։ Ողաչուն մեքենան  
ողջում և ստարտի տեղը և ինքնաթիւը զանգող


սահում ե գետնի վրայով, վորպեսդի մի քանի ըռ-  
պելից հետո հղարտորն յերկինք բարձրանա:

Ստարտի (վերաթռիչքի) տեղում ինքնաթիւոը  
զարձնում են քամու դիմաց, վորովհետեւ քամու  
հոսանքի դեմ վեր բարձրանալն ավելի հեշտ է (Հի-  
շիր, Ընթերցող, Թղթի ոճի մասին): Այնուհետև,  
յերբ ստարտի որապահը իրավունք է տալիս բարձ-  
րանալու (սովորաբար թափանարում և սպիտակ  
դրոշակով), ապա ողաջուն, ուժի ուշով նայելով  
շուրջը, տալիս է լրիվ գաղ ու բռնակը թերում ե  
զեպի առաջ, վորպեսդի սպարձրացնի պոչը: Ինքնա-  
թիւոը վաղում ե գետնի վրայով, գնալով ափելաց-  
նում և արագությունը: Թերի վերամբարձ ուժն  
աճում է: Ահա, վերջապես, նա արդեն ինքնաթիւոի  
քաշից ավելի յէ, և նա սահուն կերտով բաժանվում  
ե գետնից: Այն դիրքերը, վոր ունենում են զեկա-  
վարման բռնակն ու խորության դեկը վերաթռիչ-  
քի ժամանակ, յերեւում են 30-րդ նկարի վրա:

Բայց յերբ ինքնաթիւոը բաժանվեց գետնից,  
թերի բարձրացման ուժը ել ավելի աճում է, ճիշտ  
է, մինչև վորոշ սահմանը: Շնորհիլ սրան ինքնա-  
թիւոը կարող թռչել վոչ միայն հորիզոնական ուղ-  
ղությամբ, այլև բարձրանալ: Բարձրանալիս ո-  
վաչուն բռնակը պահում է մի վորք դեւիլ յետ թե-  
քած դրությամբ (նկ. 30), վորպեսդի խորության  
դեկը մի վորք բարձրացած լինի:

Յերբ ողաջուն հասնում է ցանկալի բարձրու-  
թյունը (ժամանակ առ ժամանակ նու նայում է ալ-  
տիմետրին), նա պակասեցնում է մոտորի ոլտույտ-  
ներն այնքան, վոր ինքնաթիւոը չճգի վեր բարձրա-  
նալու և քիթն ել չիջեցնի: Սա սովորաբար միջին

պտույտներն են, վորոնց ժամանակ ավելի հաճելի  
յե թռչել հորիզոնական ուղղությամբ:




Նկ. 39. Ինքնաթիւոի վերաթռիչքը՝ նկարի վրա ցույց ե տրված թե զե-  
կարման բռնակը և խորության դեկը հաջորդաբար ինչ զեքեր են  
ընդունում վերաթռիչքի ժամանակ

Թոիչքի ընթացքում ողաջուն հետեւում ե ա-  
նոթներին, նրա ուշադրությունն անլուգհատ գրավ-  
վում է այն ամենով, ինչ վոր վերաբերում է թռիչ-  
քին թե ոգում և թե գետանի վրա: Նրա տեսողությու-  
նը, լսողությունն ու մկաններն ասում են նրան, թե  
արդյոք ամեն ինչ սարքին է, չկա արդյոք վորեւ-  
վուանդ: Վտանդի զեպքում նա պիտի անմիջապես  
ընդունի ճիշտ լուծում:

Իջնելուց առաջ ողաջուն վերելից ընտրում ե իջ-  
նելու տեղը, և պակասեցնելով մոտորի պառայտները  
(վորք գաղիվ վրա դնելով) մի վորք թեքում և մերե-  
նալի քիթը զեպի ցած և սկսում է իջնել: Իջնելու  
ժամանակ նա անընդհատ դիտում է, թե ինչպես ա-  
զելի լավ կլինի իջնել, վոր կողմն ե լավ շրջել, ինչ-  
պես և հարմար գտնալ, վորպեսդի գետնին մտե-  
նալիս զուրս գա քամու դիմաց և այլն: Սա կոչվում  
է նատելու (իջնելու) հաշվարկում: Իջնելու հաշ-  
վարկման ճշտությունից հսկայական չափով կախում  
ունի հենց նստելը (իջնելը): Սխալ հաշվարկման հե-  
տեւանքով հաճախ ջարդվում ե մեքենան, իսկ յեր-  
բեմն ել կատաստրոֆ ե տեղի ունենում:

Բայց ահա վերջապես մոտ ե զետինը, մեքենան

Համարյա կանգնեցրած մտորով պլանավորում է  
(նկ. 31.) քամու դիմաց : Մոտենում է ամենապատասխանատու մոմենտը : Ինքնաթիւը իրեն հսկա-



յական արագությամբ պետք է չոշափի գետին, վորի վրա կարող են լինել զանազան անհարթություններ և կոշտեր : Պարզ ե, վոր, վորքան վորը և ինքնաթիւնի արագությունը նրա անիվների ու գետնի մակե-

րեռույթի խփման մոմենտին, այնքան հեշտ և անվտանգ կիջնի ինքնաթիւը :

Յերբ մինչև գետինը մնում է միքանի մետր, սղաչուն սկսում է քիչ-քիչ ձգել բռնակը դեպի յետ կամ ինչպես ասում են, «ղեալի իրեն քաշել» : Սրանից խորության ղեկը սահուն կերպով բարձրանում ե և ինքնաթիւն սկսում է թռչել հորիզոնական ուղղությամբ : Բայց վորովճետե մոտորը չի աշխատում և պտուտակը չի ձգում, ապա ինքնաթիւնի արագությունը գնալով պակասում ե, հետևաբար պակասում ե նրա թևերի վերամբարձ ուժը :

Ողաչուն միշտ շարունակում է բռնակը ձգել դեպի իրեն, ինքնաթիւնի քիթը բարձրանում ե, իսկ պոչը գնալով իջնում ե ավելի ցած : Վերջապես վերամբարձ ուժը չի բավականանում մեքենան ոդում պահելու համար, և նա իր անիվներով փափուկ կերպով դիպչում է գետնին (նկ. 31) : Մի փոքր վազում է դետնի վրայով ու մեքենան կանգ է առնում : Ողաչուն մի փոքր ավելացնում է մոտորի պտույտներն և մեքենան ուղղվում է գետի անդարը : Նրա դիմաց վազում են մեխանիկները :

Թոփչը վերջացավ :

ՎԻՐԱԺ ՈՒ ՖԻԳՈՒՐԱՎՈՐ ԹՌԻՉՔ

Ամեն վոր գիտե, վոր յեթե պարանի մի ծայրից մի քար կապենք, և այնուհետև, բռնելով պարանի մյուս ծայրից, քարին արագ պտուտական շարժում հաղորդի, ապա պարանը կձգի, իսկ քարը կզծի կանոնավոր շրջաններ : Յեթե քարի փոխարեն կապենք մի ջրով լիքը փոքրիկ դույլ, ապա արագ պտուման գետքում ջուրն այնտեղից չի թափվի, թե պետ և վորոշ մոմենտներում դույլը «գլուխվայր» կդանվի :

Այս բոլորը բացատրվում են այսպես կոչված կենտրոնախույս ուժի ազգեցությամբ, վոր միշտ առաջանում է յերբ մարմինը շարժվում են կոր դժով:

Յեվ ահա չնորհիվ այս կենտրոնախույս ուժի, ինքնաթիռի վրա կարելի յե կատարել ամեն տեսակի պտույտներ ու ֆիգուրներ:

Հանգույց, կամ, ինչպես անվանում են, մեռյուլ ողակ, շրջում թևի վրայով, կրկնակի շրջում, և կամ




Նկ. 32. Ինքնաթիռի ուղղաձիգ վիրաժը: Նկարված են մէ ուրեւ ինքնաթիռից:

տակտո, և վերջապես պտուտակաձև թռիչք —ահա այն գլխավոր ֆիգուրները, վորոնք պետք են կարողանա կատարել ինքնաթիռի վրա նույնիսկ աշտկերտ—ողաչուն: Բացի այդ ողաչուն պետք են կարողանա կատարել ամեն տեսակի դարձումներ՝ թեք և դիք: Դարձումը կոչվում է վիրաժ:

Ինքնաթիռի վիրաժը (նկ. 32) միշտ շատ դեղեցիկ են լինում մանավանդ դիք վիրաժը, յերբ թևերն

չամարյա ուղղաձիգ վիրաժ են ընդունում (ուղղաձիգ վիրաժ): Փոքրիկ եւ դյուրագարձ ինքնաթիռով կարելի յե արագ շատ փոքրիկ շրջաններ անել: Վիրաժի ժամանակ ողաչուն միշտ թեքում են տալիս՝ այլապես վիրաժ չի ստացվի: Փորձեցեք արագ վագել փոքր շրջանի վրայով և դուք ստիպված կլինեք շարունակ թեքվել դեպի շրջանի ներսը՝ վորպեսզի չընկնեք: Այդ նույնը կատարվում են նաև ինքնաթիռովի վրա:

Հանդույցն արվում այսպես (նկ. 33): ողաչուն արագացնում են մեքենան, և այնուհետեւ՝ դործելով




Նկ. 33. Հանդույց (մեռյալ հանգույց):

դեկերի միջոցով (գլխավորապես խորության դեկով) մեքենայի քիթը բարձրացնում են ուղիղ դեպի վեր և հանդույց են կատարում: Պարզ ե՞ն վորոշումնենակին ողաչուն դլխիվայը կլինի: Ցեթե հանդույցը ճիշտ են կատարած՝ ասպա ողաչուն դուրս չի ընկնի՝ նույնիսկ յեթե նա կապած չլինի (ինչպես ջուրը դույլից դուրս չի թափվում). բայց՝ իհարկե ողաչույթին անպայման կապում են: Ուրեմն՝ ինչպես յերեւում են նկարից՝ ինքնաթիռը թռչելիս դուրս են դալիս նույն կողմը՝ վոր կողմը նա առաջ թռչում են:

Թեի վրայով շրջումի ժամանակ (նկ. 34) ինքնաթիռը՝ շրջվելով անիվներով դեպի վեր, անցնում ե

քթի վրայով ու դուրս ե գալիս թռիչքի հակառակ  
կողմբ:

Տակառի ժամանակ ինքնաթիռը շրջվում և թե՛ի  
վրայով անիմներով դեպի վեր և, շարունակելով



Նկ. 84. Շրջում թևի վրայով:


պտտվել, նորից ե շրջվում թեկի վրայով ու այսպի-  
սով վերադառնում ե իր նախկին գիրքը (կրկնակի  
շրջում թելի վրայով)։ Այս Փիգուրից հետո ինքնա-  
թիռը շաբունակում ե թուչել նույն կողմը, դեպի  
վոր կողմն առաջ թռչում եր։

Պառաւտակաձեվ թոփչքը (նկ.35) կայանում են բառ-նում, վոր մեքենան ընկնում են քիթը դեպի ներքե-ուղղած, բայց միևնույն ժամանակի նու պտուլում են ողի մեջ, պտուտակի ակոսների ձեկլով։ Պառաւտա-կաձեւ թոփչքը ամենաանախորժ Փիզուրներից մեկն է։ Այս թոփչքի ժամանակ, յեթե գետնին նայես, անպայման գլուխութ ուժեղ կերպով կպտտվի մինչև վոր չընտելանաս։ Առաջներում այս պտուտակաձեւ թոփչքից շատ ողաջուներ եյին խորստակիլում ու մահանում, վորովհետեւ չեյին կարողանում դրա-նից դուրս գալ և ընկնում եյին այդպիսի թոփչքի

մէջ անոպասելիորուն, վորև և սխալի հետեվանքով։  
Իոկ այժմ պտուտակածե թռիչք և կատարում յու-  
րաքանչյուր աշակերտ։

Բնթերցողը յերկի յերկու հարց ունի տալու՝  
1) ինչո՞ւ յեն հարկավոր այդ բոլոր Փիդուրները և  
2) սարսափելի յէ արդյօ՞ք այդ անելը:

Ֆիզուրավոր թոփչքը զվարճալիքի համար չեւ:  
Այս ողաշուն, վորը կարողանում է ողի մեջ զանա-  
պան պտույտներ ու թավալումներ կատարել, նա



Նկ. 33. Պատուականեւ թոփչքը Նկարի վրա ցույց են տրված արկերի Նկ. 33. Պատուականեւ թոփչքը Նկարի վրա ցույց են տրված արկերի համար պետք է հեռանալ արագ իջնելով, ուղարկյունները, վորոնցից հաճախ պետք է հեռանալ արագ իջնելով, ուղարկ պատուականեւ թոփչքը միջոցով:

այնքան լավ ե ճանաչում իր մեքենային, վոր նրան  
վոչնչով չես վախեցնի: Որինակ առաջներում միշտ  
խորտակվում եյին պատուտակածն թոփչքից լոկ այն  
պատճառով, վոր նրա մեջ չեյին մարզվում: Լավ  
ողաչուն միայն նա յե, ով կարողանում ե անել բո-  
լոր ֆիգուրները:

Բացի այդ, մարտի ժամանակ ողաջույթս, սա-  
նավանդ կործանիչի, ողային գրոհի կամ պաշտ-  
պանության ժամանակ հարկ ել լինում այնպիսի  
դրության մեջը ընկնել, վոր գրանից աղատվելու հա-

ժար անհրաժեշտ ելինում գործադրել այս կամ այն վիզուրը։ Մարտում ողաչուն ինքնաթիւի վրա իրեն պետք եւ զգա այնպես, ինչողես լով հեծելակը ձիու վրա հեծյալ զրոհի ժամանակ։ Մերթ ոլտնու դեպի վեր, մերթ քարի նման նետվել ցած, կամ հանկարծ անսապասելիորեն այնպիսի մանյովը կատարել, վոր հակառակորդի ինքնաթիւոը վոչ ձեռնարու դրության մեջ ընկնի և կարելի լինի նրան հեշտությամբ հարվածել վայր գցել։

Իհարկե, այն ողաչույի համար, վորն արդեն վորոշ փորձ ունի, ֆիզուրավոր թոխքը ընավ ել սարսափելի չե։ Իսկ այն ուղեվորի համար, վոր առաջին անդամն ե գնում ֆիզուրավոր թոխքների, կարող են լինել անախորժելի րոպեներ, բայց այն ել վոչ միշտ։ Ամենից անախորժելի թոխքը վիրոշիցյալ ֆիզուրներից՝ դա պտուտակաձե թոխքն ե։

Ֆիզուրավոր թոխքները կատարում են միայն ամուր դյուրադարձ մեքնաներով, դլխափորապես ուղմական ինքնաթիւներով։ Իսկ մարդատար ինքնաթիւի վրա, իհարկե վոչ միայն ֆիզուրներ, այլ նույնիսկ ուղղորդ վիրաժներ չեն կատարում։

## ԹՌԻՉՔ ՅԵՂԱՆԱԿԻ ԶԱՆԱԶԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԳԻՇԵՐԸ

Ներկայումս թոխքը քիչ կախում ունի յեղանուկից։ Այդ բացարվում ե նրանով, վոր ավիացիան վաղուց ե դուրս յեկել այն մանկական վիճակից, յերբ մի փոքր քամին արդեն արդելք եր հանդիսանում թոխքի համար։


Ինչ վերաբերում ե քամուն, տպա դա համարյա վոչ մի դեր չի խաղում։ Հիմա հաճախ հարկ ե լի-

նում թոչել չատ ուժեղ մրրկային քամու ժամանակ։ Բայց այս դեպքում թոխքը ողաչույից պահանջում ե ավելի մեծ ճարպկություն և ուշագրություն, գլխավորապես բարձրանալու և իջնելու ժամանակ, բայց այսքանը միայն։ Ոդի մեջ ուժեղ քամին կարող ե բոլորովին զգալի չլինել և միայն այն ժամանակ, յերբ ուժեղ քամին ընդհատումներով ե փչում, վոր լինում ե սովորաբար փոքր բարձրությունների վրա, ինքնաթիւն որորվում ե կամ ողաչուների ասելով «թափահարում ե»։ 700-800 մետրից վեր քամին համարյա միշտ միանդամայն հավասար ե, և ուղերը կարող ե դրա մասին նույնիսկ չիմանալ։ Իհարկե, քամին աղդում ե թոխքի արագության վրա՝ քամու ուղղությամբ թոչելիս արագությունն աճում ե, իսկ քամուն հակառակ թոչելիս՝ նվազում ե։

Վորոշ չափով անախորժելի յե ինքնաթիւի համար այն յերկույթը, վորը կոչվում ե «սեմու»։ Սա նույնպես ոդի չարժում ե, այսինքն ըստ յերաթյան նույն քամին ե, բայց ոդի չարժումը տվյալ զեկում կատարվում ե վոչ թե հորիզոնական ուղղությամբ, ինչպես սովորական քամու ժամանակ, այլ ուղղաձիգ ուղղությամբ, այսինքն ներքելց գեղի վեր և ընդհակառակը։ Այս յերկույթը լինում է միայն տարիվա տաք յեղանակներին, գլխավորապես ամառը։ Ինչպես ե այդ տեղի ունենում և ինչպես ե աղդում ինքնաթիւի թոխքի վրա։

Բանն այն ե, վոր յերկրի մակերեսույթը տաքանում է արեկից անհավասարաչափ, որինակ՝ քամում և տաքանում, մարդագետինն ավելի արտը չատ և տաքանում, մարդագետինն ավելի արտի վրայի տաքացած ողն ավելի արագ ե քով արտի վրայի տաքացած ողն ավելի արագ ե

բարձրանում, քան մարդագետինների վրայի ողը: Տաքացած ողը, վոր բարձրանում է արտի վրայից,




Նկ. 36. Թռիչք «ռեմու»-ի ժամանակի ինքնաթիռը, ընկնելով ողի իջնող հոսանքից բարձրացող հոսանքի մեջ, դեպի վեր նետում ե զգում:

կակսի իջնել անտառի վրա, վորտեղ միշտ հով է: Ինքնաթիռն ընկնում ե ողի մերթ բարձրացող (նկ. 36), մերթ իջնող (նկ. 37) հոսանքի մեջ: Հասկանալի ե, վոր առաջին դեպքում ինքնաթիռը կնետվի դեպի վեր, իսկ յերկրորդ դեպքում-դեպի ցած: Այս նետումներից և ստացվում են ինքնաթիռի թափահարումները ինչպես անվանում են ողաչուները:

«Ռեմու»-ն լինում է միայն փոքր բարձրությունների վրա: 700-800 մետրից ավելի բարձր տաքացած ողի ուղղաձիգ հոսանքներ հազվագյուտ դեպքում են բարձրանում: Ամառվա շող որերին «ռեմու»-ից թափահարումներն յերեմն այնքան անխորժելի յեն լինում, վոր ուղերձները կարող են հիվանդանալ ծովային հիվանդությունով: Ժամանակակից ինքնաթիռի համար «ռեմու»-ն վտանգի սպառնում, վորովհետև ինքնաթիռի արագու-

թյունը մեծ է և մօտորն ունի հզորության մեծ պաշտամք: Բայց առաջներում «ռեմու»-ից վախում ելին



Նկ. 37. Թռիչք «ռեմու»-ի ժամանակի ինքնաթիռը ընկնելով, ողի բարձրացող հոսանքի մեջ, դեպի ցած նետում ե զգում:

նաև ողաչուները: Հենց այստեղից ել սկսեցին պատմություններ այսպես կոչված «ողային փոսերի» մասին: Բայց իրականության մեջ ողի մեջ վոչ մի ողային փոսեր չեն լինում, և ինքնաթիռի նետումները բացատրվում են ողի բարձրացող և իջնող հոսանքների ազդեցությամբ:

Ամպերը կարող են գժվարացնել թռիչքը, յեթե դրանք յերկրի վրայով ցած են գնում: Այն դեպքում հարկ է լինում նրանցից վեր բարձրանալ յիշեն նրանք հոծ են, ապա յերկիրը ողաչուն չի տեսնում և նա ողավում ե կողմանացույցով:

Անձրեն ու ձյունն ինքնըստինքյան չեն խանդարում թռիչքը, բայց նրանք կարող են գժվարացնել յերկրի դիտումը (ուժեղ անձրեն, ձյունախառն բուք) և ամպերը այդպիսի դեպքերում միշտ ցածը են անցնում: Մռվորաբար հարկ է լինում բարձրանալ

այս վատ յեղանակից ավելի բարձր՝ ու թռչել արևի պայծառ ճառագայթների տակ այն ժամանակ, յերք ներքեւում կարող է ամենավատ յեղանակը լինել:

Ինքնաթիռի ամենավոխերիմ թշնամին մառախուղն ե: Ճիշտ և մառախուղի մեջ կարելի յեթուի թեպետ և վոչինչ չի յերկում: Բայց թուչելը զժվար ե: Կողմնացուցն ու այլ անոթները կարող են մի քիչ ողնել դործին, բայց միայն մի քիչ: Իսկ իջնելը մառախուղի մեջ միանդամայն անհնարին ե (յեթե մառախուղն ուժեղ ե):

Գիշերային թռիչքն այժմ հազվագյուտ բան չի: Գիշերային թռիչքի դժվարությունները կողմորոշում ու իջնելն ե: Թռիչքի ուղին ճիշտ պահելու համար, որինակ ողային գծերի վրա, յուրաքանչյուր մի քանի տասնյակ կիլոմետրներից հետո կառուցվում են ուժեղ փարոսներ, վորոնց ողաչուն տեսնում է հետեւից և նրանցով ուղղում ե իր մեքենայի թռիչքը:

Իջնելը հեշտացնելու համար ողտվում են զանգան միջոցներով. յեթե ինքնաթիռը իջնում և նախապատրաստված այերողրոմում (այերսդրոմը մի դաշտ ե, վորտեղ բարձրանում կամ իջնում են ինքնաթիռները), ապա իջնելու տեղը լուսայիռում են ուժեղ ելեկտրական լուսարձակներով: Մարտական պարագայում հաճախ ոգտվում են ուղղակի խարույկներից: Խարույկներ յեղած ժամանակ իջնելն առանձին դժվարություն չի ներկայացնում փորձված ողաչույի համար:

Վերջին ժամանակներս հաջողությամբ սկսեցին գործադրել լուսարձակներ հենց ինքնաթիռների վրա: Դեպի ցած ուղղած ուժեղ լույսը հնարավորություն ե տալիս բարձրությունից մի հարթակ

ընտրել և իջնել: Հատկապես հարմար են այստեղ հատուկ լուսատու, հսկայական ուժ ունեցող հըրթիռները, վորոնք ամրացվում են թևերի տակ: Աղաջուն ցանկացած մոմենտին վառում է հըթիռներն ելեկտրական հոսանքի ոգնությամբ:

### ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԻՆՔՆԱԹԻՌԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Իսկ ի՞նչ նվաճումների հասավ մարդն ինքնաթիռի վրա:

27 տարի սրանից առաջ մարդն սկսեց առաջին փորձնական թռիչքները դեպի վեր իր պատրաստած մեքենայով—ինքնաթիռով: Այս 27 տարիվ ընթացքում հազարավոր ինքնաթիռներ են կառուցված ամբողջ աշխարհում, և նրանք թռել են ողում հարյուրափոր միլիոն կիլոմետրեր: Տեսնենք այժմ, թե վորքան և նրանց արագությունը, ի՞նչ բարձրության վրա ընդունակ են նրանք բարձրանալու, ինչպիսի բարձրացնելու, ինչպիսի հսկայական հեռավորությունների վրա թռչելու և վորքան ժամանակ կարող են թռչել առանց իջնելու:

Ամենամեծ արագությունը, վորին հասել են ինքնաթիռի վրա, արդեն վաղուց և անցել 400 կիլոմետրից մեկ ժամում այժմ մոտենում ե 600 կիլոմետրի: Սա յերեք անգամ ավելի մեծ ե, քան ամենամատ թռչունի արագությունը, և 10 անգամ մեծ ե, քան մեր արագընթաց դիացքի արագությունը: Այսպիսի արագությամբ կենքներագից իջնել մեկ ժամում: Իմինչև Մոսկվա կարելի յէ թռչել մեկ ժամում: Իհարկե այդպիսի արագությունը դեռ հնարավոր չի մարդասար ինքնաթիռների համար, այլ միայն չի մարդասար ինքնաթիռների համար:

Մարդն ինքնաթիռով բարձրանում է 10000 մետ-  
րից ավելի բարձր, այսինքն ամենալավ թռչու-  
նից 12 անգամ ավելի բարձր: Այսպիսի բարձրու-  
թյուն կ'ըս չի կարելի չնչելողը պահանջման և, ու  
հարկավոր է լինում վերցնել թթվածինով լի հա-  
տուկ ոպարատ: Այդ բարձրության վրա միշտ ույն-  
պիսի սառնամանիք ե լինում, ոչիք յերկրագնդի  
վրա յերեկի միտյն հյուսիսային լեռնազնն ե լինում  
և այն ել հաղվագյուտ դեպքերում:

Յանկերս ինքնաթիոհի վրա, վորն ունի չորս  
մոտոց. յուրաքանչյուրը 400 ձիու ուժանոց (ու-  
ղևամն մոտարի հզորությունը ընդամենը հսկածար և  
2000 ձիու ուժի) բարձրացրել են մեծ բարձրության  
վրա 6000 կիլոդրամ (6 տոնն, կամ 360 փթից ավելի)  
քաշ ունեցող բեռ:

Ամեն տարի աճում է թոխքի տևողությունը  
առանց իջնելու:

1927 թվի ամռանը Ամերիկայից Յեղոալա  
(Նյու-Յորքից Փարիզ) Ատլանտիկ ովկիանոսի  
վրայով առանց իջնելու թռավ ամերիկացի սղազու-  
ինդքերգը: Լինդգերգը 34 ժամում անընդհատ  
թռչում երև և թռավ 6000 կիլոմետր հեռավորու-  
թյուն: Լինդգերգը մենակ երեսքաթիուի վաս-  
նույնիսկ առանց մեխանիկի: Նա չեղանդասանում  
և հարկ յեղավ թռչել ցերեկը և գիշերը:

Լինրերգի մեծարումը զեռ չվերջացած, յերկու ուրիշ ամերիկական ոդաչուներ—Չեմբերլինն ու Լեվինը (մի ինքնաթիւով) նորից թուան Նյու-Յորքից Յեվրոպա, բայց արդեն վոչ թե ֆրանսիա այլ Գերմանիա (ավելի հեռու): Նրանք անցան 6295 կմ. տուանց իջնելու:

ինչ վերաբերում ե ինքնաթիռով թուիչքներին,

Ճանապարհին գետին իջնելով, ապա այդպիսիներն հիմա չափազանց շատ են գործադրվում և մեծ հեռավորությունների վրա: Թուշում են տասնյակ հազարավոր կիլոմետրեր հեռավորությունների վրա, և ամբողջ յերկրագնդի շուրջը ինքնաթիռով ճանապարհորդությունն արդեն նորություն չէ:

Մի խոսքով սրանք են ժամանակակից ինքնառ-  
թիռի նվաճումները։ Համարյա այս բոլոր նվա-  
ճումներն ունի նաև խորհրդային ավիտացիան։  
Մենք ունենք սեփական ավիտամուռների և ինքնա-  
թիռների կարգավորած արագորություն, վորոնք  
իրենց վորակով յետ չեն մնում արտասահմանյան  
ամենալավ տիպարներից։ Մեր ինքնաթիռների  
գերազանց վորակը շատ անդամ և ստուգված գործ-  
նկանում կատարած թուչքների միջոցով Մոսկ-  
վայից Սիբիրի վրայով մինչև Ամերիկա, ամ բողջ  
Յեվրոպայի և արևելյան յերկրների վրայով և հե-  
ռավոր հյուսիսում, չաշված տասնյակ ու հար-  
յուրագոր ինքնաթիռների անընդհատ ստուգումը  
հայովքների ժամանակ։ Մեր գյուտարարները գե-  
րազանց հատկություններ ունեցող ինքնաթիռների  
նոր տիպարներ քիչ չեն տվել։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՆՔՆԱԹԻՌԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արենամեծ չարիքը կայանում է նրանում, վար  
ենքնաթիւը չի կարող ոդ բարձրանալ առանց զու-  
քաշելու: Ուրեմն նրան անպայման հարկավոր է  
ունենալ մեծ լավ հրապարակ (այերութրում): Իջե-  
ռու ժամանակ ինքնաթիւը նույնպես վագք է ունե-  
տում, թեպետ ավելի փոքր է, քան զու քաշելու  
լազքը: Փորձեր են արվում կառուցել այնպիսի


թուչող մեքենա, վորը ող բարձրանար ուղղակի, տեղից և իջներ առանց վաղքի: Բայց այդ վորձերը զեռ հաջողություն չունեն:

Ինքնաթիռի յերկրորդ թերությունն այն ե, վոր ինքնաթիռը կարող է թռչել միայն այն ժամանակ, յերբ նա ունի վորոշ արագություն: Իսկ յեթե այդ արագությունը վորեւ պատճառով շատ պակասի, ապա ինքնաթիռն ողում չի կարողանում մնալ և վայր ե ընկնում: Ճարտարապետներն այժմ ձրդում են ինքնաթիռն այսպես կատարելագործել, վոր նա չկարողանա կորցմել արագությունը:

Ինչպես արդեն ասել ենք, մոտորն աշխատում ե բենզինով, վորը, ինչպես ամեն վոք դիտե, շատ գյուրավառ ե և ողում հրդեհի վտանգ ե ստեղծում: Ինքնաթիռի համար պետք ե կառուցել այնպիսի մոտոր, վորն աշխատեր վոչ թե բենզինով, այլ որինակ նավթով: Նավթը նույնպես դյուրավառ ե, բայց շատ ավելի քիչ ե վտանգավոր, քան բենզինը: Այդպիսի մոտորի կառուցման աշխատանքները հաջող են ընթանում:

Վերջապես ինքնաթիռով թռչելը դեռ ելի շատ թանգ ե նստում: Թանգությունը կախում ունի ընդհանրապես ողային գծերի կահավորման բարդությունից, ինքնաթիռի թանգությունից և վոր դըլիսավորն ե բենզինից, վորը վեց անգամ ավելի թանգ արժե նավթից:

Տեխնիկայի խնդիրն ե՝ կերպնել այս բոլոր թերությունները մոտակա տարբներում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0291265

14.287

ԳԻՆԸ 50 ԿՐՊ.